

Պարսկաստանի եւ Հայաստանի մէջ: Ամէն ժամանակ 300է աւելի Յիսուսեան միսիոնարներ այս երկիրներու մէջ կը գործէին, իրենցմէ իբր 10 հայագէտ անձինք յատկապէս Հայերու համար որոշուած էին: Ասոնց ձեռքն էր նաեւ Խորթի կաթողիկէ Հայերու հոգեւոր խնամքը, մինչեւ որ 1773ին Միաբանութիւնը Հռոմայ կողմանէ բարձուելովը Խորթի Հայերն ի մասնաւորի մնացած էին անխնամ, որով Պոլսոյ Առաքելական Նուիրակէն հայ քահանաներ խնդրեցին: Պոլսոյ Առաքելական Նուիրակին եւ տեղւոյն կաթողիկէ հայ հոգեւորականաց որոշմամբ՝ Անտոն Արքեպ. Ղարասուպազար ղրկուեցաւ ռուսական անցագրով, ինչպէս նաեւ քանի մը վարդապետներ Անտոնեան Միաբանութենէն ղրկուած էին 1815ին: Ղարասուպազարի կաթողիկէ Հայերուն մէջ կը գտնուէին Ղարսէն գաղթած շատ ընտանիքներ, ինչպէս նաեւ 14 տուն Տրապիզոնէն:

Արդ, Քրիստոսիորովիչի մահէն ետեւ՝ կառավարիչ ադմինիստրատոր Անտոն Վ. Վարդերեսեւիչ հետամուտ եղաւ Մոհչեւի հայ կաթողիկէ Աթոռին պատշաճ Առաջնորդ մը գտնելու: Եւ արդէն 30 Հոկտ. 1817ին կը գրէ առ Անտ. Արքեպ. Պուրադեան ի Ղարասուպազար՝ թէ ինքը Մոհչեւի եկեղեցական եւ

կաթողիկէ Հայերն ու միսիոնարները ջնջելու երգուած են, եւ կը խնդրէ որ Պարսից պետութեան մէջ գտնուող կաթողիկէներն ու միսիոնարներն այնպէս պաշտպանէ, որ այլ եւս հերձուածողներուն հալածանքներէն ազատ ըլլան: (տ. Bullarium).